ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

« 22 » հունիսի 2026 թվականի N: 209 - Ա ք.Գյումրի

ՍԱՐԳԻՍ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ հոդվածի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման 2.2-րդ և 6-րդ կետերի, նույն որոշմամբ սահմանված N 5 հավելվածի 44-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետի դրույթներով և հիմք ընդունելով Սարգիս Խաչատրյանի 2026 թվականի հունիսի 19-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Արևշատի Մետաքսեի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Սարգիս Խաչատրյանին տրամադրել 25 աշխատանքային օր ամենամյա երկարացված արձակուրդ՝ 2026 թվականի հուլիսի 6-ից մինչև օգոստոսի 7-ը ներառյալ:

2. Սարգիս Խաչատրյանի արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Արևշատի Մետաքսեի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող նշանակել նույն կազմակերպության տնօրենի տեղակալ Արմենուհի Ալեքսանյանին:

Դ.ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է